



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱՎԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՌԱՋԱՏԱՎԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

12 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Դովիաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացիներ Անաստաս Գիշյանի և Նորայր Եղիկյանի դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐՁԵՅ.

1. Քաղաքացիներ Անաստաս Գիշյանը և Նորայր Եղիկյանը 24.02.2010թ. դիմել են
«ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ
հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 113-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանա-
դրականությունը»:

Դիմողները ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իրենց դիմումում խնդրել են «ՀՀ սահմանադրության 1, 3, 14, 14.1, 18, 32 հոդվածներին և 48 հոդվածի 2-րդ կետին
հակասող և անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի
3-րդ կետի և 113 հոդվածի 3-րդ մասի դրույթները»:

2. Վիճարկող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողները
ներկայացրել են հետեւյալ հիմնավորումները.

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2009թ. ՍԴՈ-792 որոշմանը,
դիմողները նշում են, որ աշխատանքի բնագավառում անհագի սահմանադրական իրա-

վունքների եւ ազարությունների անմիջական իրացման ու պաշտպանության խնդիրների կարգավորմանն է կոչված ՀՀ աշխարհանքային օրենսդրությունը, որի նպագակն է սահմանել անձանց իրավունքների եւ ազարությունների պաշտպանության երաշխիքները, պաշտպանել աշխափողների եւ գործադրությունների իրավունքներն ու շահերը, եւ որպես աշխարհանքային հարաբերությունների կարգավորման սկզբունք նախագիծն է կողմերի իրավահավասարությունը՝ անկախ աշխարհողի գործնական հավլանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Դիմողները գիտում են, որ գործադրությունը կրում է անուղղակի ապացուցման պարբականություն աշխափողի հանդեպ նրան արդադրության ծավալների, գննութեական, գեխնութեական եւ աշխարհանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արդադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխափողների թվաքանակի կրճադրման դեպքում աշխարհանքից ազարելիս ապացուցելու, որ իր մով բացակայում է նրա մասնագիրական պարբասխությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխարհանք:

Դիմողները համոզված են, որ խնդրո առարկա քաղաքացիական գործով բացակայում է համապատասխան թույլափրելի ապացույցը այն մասին, որ պարբասխանող ընկերությունում առկա չէ հայցվորի մասնագիրական պարբասխությանը եւ որակավորմանը համապատասխան այլ աշխարհանք:

Դիմողների կարծիքով՝ ՀՀ աշխարհանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, այդպիսի ծեւակերպմամբ համահունչ չէ Սահմանադրության 1, 14 եւ 14.1 հոդվածներով ամրագրված եւ մարդու համար երաշխավորված սահմանադրափական նորմերի բովանդակությանը:

Դիմոցները գիտում են, որ վերոնշյալ հոդվածի հետեւյալ ծեւակերպումները, այն է՝ «...եթե իր մով առկա հնարավորությունների սահմաններում...» եւ «...գործադրությունը համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում...», գործադրությունը համար սուրյեկտիվ գործողությունների լայն դաշտ են սպեհում, ինչի արդյունքում խախվում են աշխափողների Սահմանադրությամբ երաշխավորված 1, 3, 14, 14.1, 18, 32 հոդվածներով եւ 48 հոդվածի 2-րդ կետով ամրագրված իրավունքները:

3. Ուսումնասիրելով դիմումը եւ դրան կից փաստաթղթերը՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 1 դադարական կազմը պարզեց, որ

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դադարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դադարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դադարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դադարանում գործի դադարանություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դադարական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 1 դադարական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացիներ Անաստաս Գիշյանի եւ Նորայր Եղիկյանի գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային Ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝



12 մարտի 2010 թվականի
ՍԴԿԸ/1-7